ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 03.12.2021թ. ժամը 11^{00}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/ԱՊՊԱ>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ստեփան Բաղդասարյան- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական

Անդամներ՝

Կարեն Հունանյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Վահագն Նազլոյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Կարեն Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ

Նիստին ներկա չէր հանձնաժողովի անդամ Ալեքսան Եղիշյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բանակցությունների մասին

<<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/ԱՊՊԱ>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. թիվ 2 որոշմամբ՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի 1-ին մասի 8.7 կետի բ. ենթակետի համաձայն կասեցվել է նիստը և հայտերով ներկայացված գների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ սույն թվականի դեկտեմբերի 03-ին, ժամը 11^{00}ին, Կոտայքի մարզպետարանում՝ ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք հասցեում:

Մասնակիցները չեն ներկայացել բանակցությունների և չեն ներկայացրել նոր գնային առաջարկներ:

2. <<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/ԱՊՊԱ>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 Ճանաչել ընտրված մասնակից <<ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ին:

2.2 Կիրառել անգործության ժամկետ. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է:

2.3 Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ ---------- ***Ս.Բաղդասարյան***

անդամներ՝

---------- ***Կ.Հունանյան***

---------- ***Վ.Նազլոյան***

---------- ***Կ.Հովհաննիսյան***

քարտուղար՝ ---------- ***Հ.Հակոբյան***